ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՀՈԳԵՎՈՐ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԺՈՂՈՎ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

## ԺՈՂՈՎՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԵՑ, ՈՐ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ԵՎ ԾԱԼԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԸ ԱԶԱՏՎՈՒՄ Է ՊԱՇՏՈՆԻՑ

*2017 թվականի հոկտեմբերի 25-ին, Սամցխե-Ջավախեթիի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդության Ախալքալաքի գրասենյակում, տեղի ունեցավ հոգեւոր սպասավորների եւ պաշտոնեության համատեղ ժողով, որը վարեց Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:*



Ժողովում քննարկվեցին՝ փոխանորդությունում սպասվող կադրային եւ կառուցվածքային փոփոխությունների եւ Սամցխե-Ջավախեթիում ու Ծալկայում ծառայող եկեղեցականների ու աշխատակազմի գործունեությունը՝ ըստ այդ փոփոխությունների, հարցերը:

Վազգեն եպիսկոպոսը փոխառաջնորդության հոգեւոր դասին եւ պաշտոնեությանն իրազեկեց, որ այլ ծառայության կոչվելու եւ փոխառաջնորդարանում սպասվող կառուցվածքային փոփոխությունների բերումով, Սամցխե-Ջավախեթիի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Բաբգեն վարդապետ Սալբիյանը ազատվում է զբաղեցրած պաշտոնից: Վազգեն եպիսկոպոսը դրական գնահատեց Բաբգեն վարդապետի տասնվեց տարիների ծառայությունը տեղում եւ հույս հայտնեց, որ, նոր ծառայության վայրում, Հայր Սուրբը, Ջավախեթիում ամբարած փորձով, առավել արդյունավետ գործունեություն կծավալի՝ ի շահ Հայ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

*Նկարում.- Համատեղ ժողովի ժամանակ:*

## ՊԱՇՏՈՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԽՆԴՐԱՆՔ

*Ախալքալաքիում Հայ Առաքելական եկեղեցու հավատացյալները բաց նամակ են հղել Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդին՝ Հայ Առաքելական եկեղեցու վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախեթիում եւ Ծալկայում առաջնորդական փոխանորդի պաշտոնում Բաբգեն վարդապետ Սալբիյանին վերականգնելու խնդրանքով:*

*Նամակում, մասնավորապես, ասված է*.

«Արդեն մի քանի օր է մենք՝ Հայ եկեղեցու զավակներս, ինչպես նաեւ տարբեր խավի մարդիկ. պատգամավորներ, բժիշկներ, մանկավարժներ, հասարակական գործիչներ, բիզնեսմեններ եւ շարքային քաղաքացիներ, հավատացյալ մարդիկ եւ շարքային քաղաքացիները անհանգստացած են, որ Սամցխե-Ջավախեթիի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Բաբգեն վարդապետ Սալբիյանը ազատվում է զբաղեցրած պաշտոնից:

Նրա հետ ունեցած մեր ամեն մի զրույցն ամրապնդում է մեր հավատքը: Նրա գլխավորությամբ մեր տարածաշրջանում հաջողվեց է'լ ավելի ամրապնդել եղբայրական ոգին ու բարեկամությունը հայ-վրացական եկեղեցիների միջեւ:

Խնդրում ենք՝ թողնել Սամցխե-Ջավախեթիում եւ Ծալկայում Հայ Առաքելական եկեղեցու վարդապետ Բաբգեն Սալբիյանին իր պաշտոնում»:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ

# «ՄԻ ՔԱՅԼ ԱՐԱ ԻՆՁ ԸՆԴԱՌԱՋ»



*Ջիվան Ասատրյանը 45 տարեկան է: Ապրում է ծննդավայր Ախալքալաքիի մունիցիպալիտետի Խորենիա գյուղում: Ունի միջնակարգ կրթություն: «Վրաստան» թերթում տպագրվում է առաջին անգամ:*

### ՆՎԵՐ

*Քեզ նվիրեմ մի ծաղկեփունջ՝*
*Ծաղիկներով հիանաս,*
*Ծնողներիդ ջերմ հարգանքով,*
*Խրատներով լիանաս:*

*Քո կյանքում միշտ լինես առողջ,*
*Քնքուշ սիրով ամրանաս,*
*Զավակներիդ աշխարհ բերես՝*
*Մայրիկ դարձած ծերանաս:*

### ԴԱՐՁԻՐ ԸՆԿԵՐ

*Գերեմ սիրտդ եւ սերդ,*
*Դառնամ կյանքիդ ընկերը,*
*Շուրթդ պաչեմ, ջերմանամ,*
*Բույրդ քաշեմ, թարմանամ:*

*Դու ի'նձ սիրիր, ես էլ՝ քե'զ,*
*Մենակ ասա, որ իմն ես...*
*Քեզ կպահեմ վարդի պես,*
*Իմ սիրելի Մերին ես:*

*Դու մի դատիր՝ ով եմ ես.*
*Հեշտ ու հանգիստ կասեմ քեզ՝՝*
*Խելքս, միտքս հասկացիր՝*
*Կյանքիս ընկերը դարձիր:*

### ՍԻՐՈ ԱՄԻՍ

*Գարնան ամիս, սիրո համից*
*Չեմ կշտանում ոչ մի բանից,*
*Ասա տեսնեմ ինչ պատահեց,*
*Որ իմ սիրտը քեզ չներեց:*

*Լամպդ կապույտ, ճամփադ կանաչ,*
*Մի քայլ արա ինձ ընդառաջ,*
*Նայեմ դեմքիդ՝ անեմ հառաչ,*
*Արցունք թափեմ աչքիդ առաջ:*

ԿՐԹԱԿԱՆ

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է



*Հաջորդ տարվանից երկրի նախադպրոցական հաստատություններում կաշխատեն միայն դաստիարակ-մանկավարժի կարգավիճակ ունեցող անձինք: Այդ մասին հայտարարեց Թբիլիսիի մանկապարտեզների միավորման գործակալության պետ Թեմուր Թորդինավան:*

Նրա խոսքով՝ այդ նպատակով Վրաստանի կառավարության կողմից հաստատված մասնագիտական նոր կարգավիճակի ներդրումը՝ մասնավոր եւ հանրային մանկապարտեզներում, կլինի պարտադիր: Թորդինավայի խոսքով՝ դաստիարակ-մանկավարժի կարգավիճակը նշանակալիորեն գերազանցում է դաստիարակի կարգավիճակին: Ինչպես նշեց նա, ներկա դրությամբ, Թբիլիսիի մանկապարտեզներում աշխատող շուրջ 2500 դաստիարակներից բոլորը չէ, որ կստանան դաստիարակ-մանկավարժի կարգավիճակ, թեպետ նրանք բոլորն անցնելու են վերապատրաստում:

Գործակալության ղեկավարի խոսքով՝ 2024 թվականի սեպտեմբերի 1-ից դաստիարակ-մանկավարժի պաշտոնում աշխատանք կունենան միայն նրանք, ովքեր ունեն նախադպրոցական դաստիարակության թեքումով բարձրագույն կրթություն:

Նշենք, որ նախադպրոցական դաստիարակության հաստատություններում, կրթության որակի բարձրացման նպատակով, երկրի կառավարության կողմից ընթացիկ տարվա հոկտեմբերի 27-ին հաստատվեցին նոր չափորոշիչներ, որոնք մի կողմից նախատեսում են մանկապարտեզների դաստիարակ-մանկավարժների որակավորման բարձրացում, մյուս կողմից՝ դպրոցական տարիքի երեխաներին դպրոցական պարտադիր ունակությունների ուսուցանում:

Ոլորտի հաջորդ նորամուծությունն այն է, որ հաջորդ տարվանից Վրաստանի մասնավոր եւ հանրային մանկապարտեզներն անցնելու են ավտորիզացման գործընթաց:

ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՐԴԻԿ

# ԸՆԿԵՐ, ՄԱՆԿԱՎԱՐԺ...

*Այս անգամ Կորյունին հանդիպեցի Այազմայում, գուսան Հավասու տոնակատարությանը. նույն բացառիկորեն ջերմեռանդն ու գործին նվիրյալն էր:*

- Եթե յուրաքանչյուր մասնագետ,- ասում էր, - իր գործն ամենակարեւորը համարի, ամեն ինչ հրաշալի կլինի: Ես, օրինակ, համոզված եմ, որ մանկավարժի մասնագիտությունն ամենապատասխանատու ու ամենահետաքրքիրն է: Մանավանդ, երբ ոչ միայն կոչումով, այլ էությամբ ես մանկավարժ: Ու եթե այդպես է, ապա, աշխատանքդ ոչ միայն քեզ, այլեւ քո աշխատատեղին ու նաեւ բնակավայրին, երկրին է համբավ ու հեղինակություն բերում: Ստացվում է՝ պետք է սիրես ոչ միայն երեխաներին, այլեւ բնակավայրդ ու երկիրդ եւ, հանուն այդ երկուսի, երեխաներին ճիշտ կրթես:

Զրուցակիցս Ախալքալաքի փոքր Արագյալ գյուղի հանրային դպրոցի տնօրեն Կորյուն Բասենցյանն է: Նա շարունակում է իր խոսքը, իսկ ես մտովի ուրախանում եմ, որ նման նվիրյալ ունենք:

- Ուրախանալու առիթ կա՞, Կորյուն,- հարցնում եմ նրան: - Բա չկա՞,- ուրախ-ուրախ արձագանքում է եւ՝ նույն ոգեւորությամբ՝ շարունակում: - Այս տարի, Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարական դպրոցի աջակցությամբ, սկսվեցին Վրաստանի պետական լեզվի ուսուցման դասընթացները: Մեր շրջանում դասընթացները ղեկավարում էր ռեսուրս-կենտրոնի տնօրեն Դավիթ Ձեդգենիձեն: Աննախադեպ իրադարձություն էր, որովհետեւ մեր դպրոցից 11 մանկավարժ բարձր միավորներով ավարտեցին Ա1 եւ Ա2 ծրագիրը: Նրանք, պետական լեզվի յուրացման համար, Վրաստանի Կրթության եւ գիտության նախարարության կողմից հավաստագրեր ստացան: Մեր ցանկությունն է, որ ծրագիրն իր շարունակությունն ունենա, որպեսզի բոլոր մանկավարժները լավ տիրապետեն վրաց լեզվին:

Մեր մանկավարժներից մաթեմատիկայի եւ ռուսաց լեզվի ուսուցիչներ Բուրաստան Չոմարյանն ու Մելանյա Վարդանյանն ստացան ավագ ուսուցչի կոչում: Համապատասխան միավորներ հավաքելուց հետո, հեռակա կարգով, ավարտեցին ԱՍԻՊ Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարանի հումանիտար կրթության սոցիալական գիտությունների ֆակուլտետի՝ ուսուցիչների վերապատրաստման 60 կրեդիտ ծրագրի մեկամյա դասընթացները: Ինչ խոսք, ոչ միայն կատարելագործեցին իրենց գիտելիքները, այլեւ 320 լարիով բարձրացավ նրանց աշխատավարձը: Մյուսները՝ Սամվել Ծառուկյանն ու Քրիստինե Եղոյանը, բարձրացրին իրենց կրթական մակարդակը, դարձան մագիստրոսներ: Մեր 8-րդ դասարանի աշակերտներից 3-ը՝ մասնակցեցին «Էտալոն» հեռուստախաղին ու հաղթող ճանաչվեցին:

- Սակայն, է'լ ավելի լավ լուր ունեմ, Հովիկ,- շարունակեց Կորյունը,- ամեն տարի բարձրանում է մեր դպրոցի աշակերտների թիվը, օրինակ, այս տարի 6 աշակերտով ավելին է նախորդ տարվանից... Մեր Փոքր Արագյալը այլեւս չի հայաթափվում...

Մոտ երեք տասնամյակ է, ինչ Կորյունը, որպես տնօրեն, աշխատում է դպրոցում: Երեւի այդ է պատճառը, որ տնօրինում է այնպես, ինչպես՝ իր հարազատ ընտանիքը.

- Մենք խնայողաբար ենք օգտագործում մեր դպրոցական բյուջեն: Այսպես, այս տարի տնտեսած 14.000 լարիի հաշվին եւ, իհարկե, նախարարության թույլտվությամբ, դպրոցում անցկացնելու ենք ջրատար խողովակներ, գազիֆիկացնելու ենք շենքը, նաեւ՝ իրականացնելու ենք դպրոցին անհրաժեշտ վերանորոգումներ:

Համաձայնեք, որ մեր օրերում նման նվիրյալներ, իսկապես, քիչ կան: Կորյունին սիրում է ամբողջ գյուղը, դպրոցի շրջանավարտ ու յուրաքանչյուր աշակերտ: Այս տարի Կորյուն Բասենցյանը նշում է իր ծննդյան վեց եւ՝ տնօրինության երեք տասնամյակները: Ցանկությունս է, որպեսզի երկար տնօրինի ու երբեք առողջությունից չբողոքի: Սա այն եզակի դեպքերից է, երբ մասնագետի հարցում հասակը տարիք չի հարցնում, որովհետեւ Կորյունն իսկապես չի նահանջում, ընդհակառակը՝ գնում է ժամանակին համընթաց, մշտապես առաջին դիրքերում: Շնորհավո՜ր, բարեկամս...

***ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԻԿՅԱՆ***
*Նինոծմինդայի մունիցիպալիտետ*

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐ



***Ընդհանրապես, չեմ սիրում բժշկական ստուգումները, փանել չեմ կարող: Հետեւաբար, կցանկանայի, առանց բժիշկներին դիմելու, ինքս պարզել, թե ի՞նչ հիվանդությամբ եմ փառապում: Ասում են դիաբետ ունեմ: Գուցե օգնեք, պարզել, իրո՞ք շաքարախտով հիվանդ եմ, թե՞ ոչ:***

***Ս.Մնականյան***

***Թբիլիսի***

Ստորեւ ներկայացնում ենք շաքարային դիաբետի զարգացման նախանշանները:

**1.** Չարդարացված քաղցի զգացում:

Ուշադրություն դարձրեք ձեր առողջությանը, եթե սննդի ընդունումից մեկ ժամ հետո կրկին ցանկանում եք ուտել, կամ քաղցի մշտական զգացողությունը հետապնդում է ձեզ, ապա, դա կարող է վկայել արյան մեջ շաքարի մակարդակի, նյութափոխանակության խանգարման մասին:

**2.** Արյան մեջ գլյուկոզայի բարձր մակարդակի առկայությունը ժամանակի հետ առաջացնում է կուրություն: Այդ պատճառով, եթե ունենում եք աչքերի մեջ ավազահատիկների զգացողություն ու՝ պարբերաբար պատկերների երկատում, ապա դա պետք է ձեզ անհանգստացնի:

**3.** Եթե արյան մեջ շաքարի մակարդակը բարձր է լինում, ապա բջիջները սկսում են թթվածին չստանալ, որն էլ արտահայտվում է ուժերի կտրուկ կորստով:

**4.** Հաճախակի միզարձակումը եւս կարող է հանդիսանալ շաքարային դիաբետի նախանշան:

**5.** Օրգանիզմը ի վիճակի չի լինում մշակել նրանում առկա շաքարը, իսկ երիկամները շարունակ փնտրում են հեղուկ՝ վերջինիս լուծման համար, որն էլ, ի վերջո, հանգեցնում է միզուղիների հետ կապված խնդիրների առաջացման:

**6.** Ինսուլինի պակասը, որը քայքայում է սնունդը, կարող է հանգեցնել քաշի կտրուկ իջեցման, որն էլ, առհասարակ, բնորոշ է շաքարային դիաբետի առաջին տեսակի հիվանդների համար:

Իսկ եթե դուք շարունակ բերանում չորություն եք զգում ու ցանկանում եք ջուր խմել, ապա դա կարող է խոսել դիաբետիկ կետոացիդոզի մասին:

Արյան մեջ գլյուկոզայի բարձր մակարդակը հանգեցնում է արյան խտացման, իսկ հեղուկի մշտական օգտագործումը թուլացնում է այն:

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄ

## ԵԹԵ ԱՄՍՎԱ 13-ՐԴ ՕՐԸ ՈՒՐԲԱԹ Է...

***Տարածված արեւմտյան սնահավատության համաձայն՝ այդ օրը պետք է պատրաստ լինել եւ զգույշ մնալ անհաջողություններից:***




Հյուսիսային Կարոլինայում գտնվող Աշեւիլի Սթրեսի կառավարման կենտրոնի եւ ֆոբիայի ինստիտուտի տվյալների համաձայն, ԱՄՆ-ում այս օրից վախենում է մոտ 17-21 միլիոն մարդ: Որոշ մարդիկ այնքան են վախենում, որ հրաժարվում են զբաղվել բիզնեսով, թռչել այլ երկրներ եւ նույնիսկ քնել: Մոտավոր հաշվարկներով, այս օրը բիզնեսը կորցնում է 800-900 միլիոն դոլար: «Ուրբաթ-13-ի» մասին առաջին գրանցված հիշատակումը եղել է 1900-ականների սկզբին: «13» թվից վախն անվանվում է «տրիսկայդեկաֆոբիա»:

«13» թիվը եվրոպական մշակույթում անհաջողակ թիվ է: Այս կապակցությամբ որոշ շենքերում հարկերը համարակալվում են այնպես, որ 12-րդ հարկին անմիջապես հաջորդի 14-րդը: Իտալիայի թատրոններում բացակայում են այդ համարով տեղերը, իսկ գրեթե բոլոր նավերում 12-րդ նավախցիկին անմիջապես հաջորդում է 14-րդը:

Բազմաթիվ օդաչուների նախապաշարմունքի պատճառով՝ Միացյալ Նահանգներում երբեք գոյություն չի ունեցել F-13 կործանիչ: F-12-ին անմիջապես հաջորդել է F-14-րդը: «Ֆորմուլա-1» ժամանակակից ավտոարշավներում չկան 13 թվով մեքենաներ, կրկին՝ 12-ին անմիջապես հաջորդում է 14-րդը:

Կա եւս մեկ նախապաշարմունք՝ կապված «ուրբաթ-13-ի» հետ. եթե մեկ սեղանի շուրջ հավաքվում են 13 մարդ, ապա նրանցից մեկը, մեկ տարվա ընթացքում, կմահանա: Գոյություն է ունեցել նույնիսկ «14-րդ հյուրի» մասնագիտություն, ում հրավիրում էին հանդիպման՝ անհաջողակ թվից խուսափելու համար: Միացյալ Նահանգներում, այդ նախապաշարմունքի դեմ պայքարելու համար, ստեղծվել էր «13-ի ակումբ»:

ԱՌՕՐԵԱԿԱՆ

## ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

***Բուժիչ սնուցումը խիստ կախվածության մեջ է գտնվում տարվա եղանակներից. գարունը կանաչեղենի ու բանջարի ժամանակն է, ամառը՝ ամառային բանջարեղենի ու մրգերի, աշունը՝ աշնանային բանջարեղենի ու մրգերի, իսկ ձմեռը հատիկեղենի ու ձավարեղենի ժամանակն է: Սննդամթերքի ընտրությունը, ըստ բնաբույժների, պետք է կատարել ելնելով այս տեսակետից:***

Պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր մարդու համար առավել օգտակար են իր երկրում աճած միրգն ու բանջարեղենը: Բացի դրանից, վիտամիններով ու հանքային աղերով հարուստ են թարմ բանջարեղենն ու միրգը: Ավելի լավ է քիչ քանակությամբ թարմ սնունդ ընդունեք, քան մեծ քանակությամբ վաղուց թառամած բանջարեղեն:



Հարկավոր է սննդի մեջ սահմանափակել աղի քանակությունը. մարդու օրգանիզմին օրվա ընթացքում լրիվ բավարար է 2 գրամ աղը: Պետք է նկատի ունենալ, որ խոհանոցային մշակված աղը վնասակար է, եւ այդ պատճառով, անհրաժեշտ է օգտագործել քարաղ: Մշակված աղի մեջ պարունակվում է միայն նատրիում, իսկ կալիում բոլորովին չկա: Մյուս մթերքներում էլ կալիում քիչ կա: Իսկ մեր օրգանիզմին անհրաժեշտ կալիումի ու նատրիումի հարաբերակցությունը պետք է լինի՝ 4:1: Ուրեմն, ինչքան բուսական սնունդ է հարկավոր ընդունել, որպեսզի պահպանվի անհրաժեշտ հարաբերակցությունը:

Կաթնամթերքները նույնպես կարելի է որպես բուժիչ սնունդ օգտագործել:

Հայտնի է նաեւ, որ մայրական կաթը փոքրիկների համար անփոխարինելի է, սակայն մինչեւ երեք տարեկանը: Այդ տարիքում երեխան արդեն պիտի անցնի տեսակային սննդի: Շատ մասնագետներ կարծում են, որ երեխան, մինչեւ մեկ տարեկանը, մայրական կաթից բացի ուրիշ ոչինչ չպետք է ուտի: Բնաբուժները խորհուրդ են տալիս՝ նրան կերակրել նշով, որը հարուստ է սննդարար նյութերով, 20 հատ նուշ երեկոյան թրջել, առավոտյան մաքրել շագանակագույն կեղեւը, սպիտակ միջուկը տրորել, ավելացնել ջուր կամ գազարի հյութ: Սա շատ օգտակար է թուլակազմ երեխաների համար:

Հարկավոր է խուսափել յուղոտ սննդից: Անհրաժեշտ քանակությամբ ճարպ օրգանիզմն ստանում է արեւածաղկի սերմերի, ընկույզի տարբեր տեսակների, նշի, բուսական յուղի միջոցով:

Խորհուրդ են տալիս օգտագործել սխտորային յուղ: Պատրաստվում է այսպես: Սխտորը մաքրել, լցնել ապակյա տարայի մեջ եւ վրան ավելացնել բուսական յուղ, նախընտրելի է՝ ձիթապտղի: Տարայի բերանը փակել, պահել 2-3 շաբաթ, հետո յուղը կարելի է օգտագործել՝ ավելացնելով աղցանների, շիլաների, ապուրների վրա: Երբ յուղը վերջանա, սխտորը նույնպես կարող եք կտրատել եւ օգտագործել:

## ՍՈՒՐՃԸ՝ ԱԿՏԻՎԱՑՆՈՂ ԵՎ ՔՆԵՑՆՈՂ ՀԱՏԿՈՒԹՅԱՄԲ

***Մեծամասնության մոտ սուրճն առաջացնում է անքնություն, իսկ ոմանց մոտ էլ՝ քնելու հատկություն: Ո՞րն է պատճառը:***



Այս հարցը՝ մի շարք բժիշկների կողմից, երկար ժամանակ մնացել էր չպարզաբանված: «Ժողովրդական բուժամիջոցներ» գրքի մեջ նշվում է, որ, ի շնորհիվ մեծ ֆիզիոլոգ, ակադեմիկոս Ի.Պ.Պավլովի, բազմակողմանիորեն ապացուցվել է այդ երկու հակադիր ազդեցության ցուցումը կոֆեինի գործողության շնորհիվ:

Ապացուցված է, որ կոֆեինի թերապեւտիկ դեղաչափը ցուցաբերում է տոնուսը բարձրացնող ընթացքը: Արդյունքում առաջ է գալիս «նորմային հավասարեցում»՝ մինչ ֆիզիոլոգիական վիճակը: Առաջ մղվող ֆիզիոլոգիական հավասարակշռում՝ երկու հիմնական ընթացքների միջեւ, տեղի է ունենում հրահրիչ, գրգռիչ եւ արգելակիչ երեւույթների հետեւանքով, առանց որի հնարավոր չէ գլխուղեղի հիմքի նորմալ աշխատանքը: Եթե ընթացքին տիրում է հրահրիչ գրգռիչը՝ ընդդեմ արգելակման երեւույթների, առաջ է գալիս անքնություն եւ՝ ընդհակառակը:

Նրանց մոտ, որոնք խախտում են նշված հավասարակշռության ընթացքը, հաստատապես քնաբեր գործողություն է սկսվում, իսկ հակառակ կողմի մոտ՝ ոչ քնաբեր:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Պայքարն ապրելու ձեւ է դարձել հայերիս համար:

***ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ***
***(1908-1994)***
***Ամենայն Հայոց կաթողիկոս***

Կրթությունը գնելը նույնն է, ինչ վճարելը դատարկ գլխի համար:

***ԻԼԻԱ ՃԱՎՃԱՎԱՁԵ***
***(1837-1907)***
***Վրաց գրող***

Ամեն ինչ հետազոտի'ր, առաջին տեղը տուր բանականությանը:

***ՀԻՊՈԿՐԱՏ***
***(մ.թ.ա.460-մ.թ.ա.377)***
***Անտիկ հույն բժիշկ, փիլիսոփա***

Քչերն են բավականաչափ խելացի, որպեսզի օգտակար հանդիմանությունները գերադասեն վտանգավոր գովեստներից:

***ԼԱՌՈՇՖՈՒԿՈ***
***(1613-1680)***
***Ֆրանսիացի քաղաքական գործիչ***

Միակ բանը, ինչից մենք պետք է վախենանք, վախն է:

***ՖՐԱՆԿԼԻՆ ՌՈՒԶՎԵԼՏ***
***(1882-1945)***
***ԱՄՆ 32-րդ նախագահ***

Անուղղելի մանր սխալներից հեշտ է անցնել խոշոր արատների:

***ԷՐԻԽ ՄԱՐԻԱ ՌԵՄԱՐԿ***
***(1898-1970)***
***Գերմանացի գրող***

Եթե ձեզ լավ կրթություն են տվել, դա չի նշանակում, որ դուք այն ստացել եք:

***ՆԱԻՐԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Պետը՝ քարտուղարուհուն.*

*- Բոլոր աշխատակիցներին հավաքիր խորհրդակցության համար:*

*- Սելեկտորո՞վ:*

*- Ոչ, գրողը տանի, «Օղնակլասսնիկով», այդպես ավելի հեշտ կլինի:*

*☺ Ինչո՞ւ ես պահեստի գաջը գողացել ու վաճառել,- զայրացան պահակ Սենոյի վրա:*

*- Գա՞ջ, գաջն էլ գաջ՝ էղներ՝ սաղ տանողները կբողոքեին...*

*☺ Մի անամոթ ու տգեղ կին պահանջում էր, որ իրեն ամուսնալուծեն եւ ամուսնուն խիստ պատժեն:*

*Դատավորն ասաց.*

*- Տիկին, եթե ուզում ես, որ ամուսինդ պատժվի, ուրեմն, մի բաժանվիր:*

*☺ - Սիրելի'ս, այս ի՞նչ գեղեցիկ զգեստ ես հագել:*

*- Իսկ ես ինքս գեղեցի՞կ եմ:*

*- Սիրելիս, եթե այստեղ միայն քո շորը լինէր, ես իհարկե կլռեի:*

*☺ - Երեկ քիչ էր մնում ես ու կինս բաժանվեինք:*

*- Ո՞նց թե՝ «քիչ էր մնում»:*

*- Դե կռվեցինք, ասաց՝ հեռանում եմ քեզնից, բայց մինչեւ գնալը էնքան երկար էր դիմահարդարվում, որ վերջը մոռացավ՝ ուր էր պատրաստվում գնալ...*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԲԱՐԵԽՂՃՈՐԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ Է ԻՐ ՀԱՐԵՎԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

միության կազմավորման հարցերով, հավանաբար մտածում էին, որ դա մեծ խոչընդոտ է:

Սակայն, հետագայում նրանք հասկացան, որ դա այդպես չէ: Իհարկե, դա որոշ իմաստով կարող է լինել տեխնիկական խոչընդոտ, սակայն այն կարելի է հաղթահարել:

Առեւտրատնտեսական շրջանառությունը ցույց է տալիս, որ վրացական կողմը շատ լավ է կատարում իր ինչպես հարեւանական, այնպես էլ՝ այլ պարտավորություններ: Հետեւաբար, իհարկե, խոչընդոտն այս դեպքում որակապես այնքան էլ լավ վիճակում չգտնվող ճանապարհն է: Ես նկատի ունեմ լեռնային ճանապարհը. անձրեւներ, ձյուն եւ ամեն ինչ: Այժմ մենք մտածում ենք, թե ինչպես երկրորդ ճանապարհ ստեղծենք:

*- Գիտեք, գործարարներն ինձ այնպիսի բաներ պատմեցին, որոնք ինձ վրա մեծ տպավորություն թողեցին: Գյուղատնտեսական արտադրանքի առաքումը, ինչքան արագ, այնքան լավ, անհամեմատ հեշտացել է, բայց միեւնույն է Վրաստանի եւ Ռուսաստանի հետ սահմանին՝ Վերին Լարսում, հայկական արտադրանքն առանց զննության, առանց մաքսատուրքի է անցնում, վրացականը՝ ենթարկվում է մաքսային զննության, եւ նրանք հաճախ բոլորի հետ նույն հերթում են կանգնում:*

- Այո: Իհարկե, մենք պարբերաբար այդ հարցերը բարձրացնում ենք: Մենք մի կողմից պետք է բարելավենք անցակետերի աշխատանքը, մյուս կողմից՝ այդ արտադրանքները ռուսական շուկա հասցնելու համար այլընտրանքային ուղիներ գտնենք: Միշտ չէ, որ ամեն ինչ ստացվում է, եւ ցանկացած աշխատանքի կատարելագործման համար ժամանակ է պետք:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ ՄԱԿ-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

*Նոյեմբերի 1-ին« Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Միավորված ազգերի կազմակերպությանը Հայաստանի անդամակցության եւ Հայաստանում ՄԱԿ-ի գործունեության 25-ամյա հոբելյանների կապակցությամբ, այցելեց ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ:*



Սերժ Սարգսյանը շնորհավորեց կազմակերպության աշխատակազմին՝ ՄԱԿ-ի մշտական համակարգող Բրեդլի Բուզետտոյի գլխավորությամբ, ինչպես նաեւ կազմակերպության հայաստանյան թիմի մաս կազմող մասնագիտացված գործակալություններին, հիմնադրամների եւ ծրագրերի ղեկավարներին ու աշխատակիցներին՝ այդ կարեւոր ու հիշարժան հոբելյանի առթիվ:

ՄԱԿ-ի մշտական համակարգող Բրեդլի Բուզետտոյի հետ հանդիպման ժամանակ՝ Սերժ Սարգսյանը հույս հայտնեց, որ կազմակերպության հետ Հայաստանի արդյունավետ համագործակցությունը տարեցտարի առավել կամրապնդվի ու կխորանա: Բրեդլի Բուզետտոն ընդգծեց, որ գրասենյակն այս տարիների ընթացքում իր լավագույն ջանքն է ներդրել, որպեսզի ՄԱԿ-ը Հայաստանում դառնա չեզոք հարթակ՝ միջազգային համայնքի եւ Հայաստանի համադրված աշխատանքի համար: «Հայաստանում՝ ՄԱԿ-ը բազմաթիվ ծրագրեր է իրականացնում Եվրոպական Միության, Ռուսաստանի Դաշնության, Միացյալ Նահանգների եւ այլ դոնորների ֆինանսավորման միջոցով: Մենք այս տարիներին փորձել ենք կենտրոնանալ՝ Հայաստանի կառավարության համար կարեւոր ռազմավարական խնդիրների վրա, օրինակ՝ սահմանային անցակետերի արդիականացում, ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդում, ժողովրդավարական ընտրությունների անցկացում, ինչպես նաեւ՝ ժողովրդագրական խնդիրների լուծման ուղղությամբ աշխատանք: Ակնկալում ենք նաեւ նոր ծրագրերի իրականացում»,- նշեց ՄԱԿ-ի մշտական համակարգող Բուզետտոն:

Հանդիպման ավարտին՝ Սերժ Սարգսյանը, ՄԱԿ-ի մշտական համակարգողի ուղեկցությամբ, դիտել է գրասենյակում բացված «Հայաստան-ՄԱԿ. 25 տարի միավորված ազգերի ընտանիքում» ցուցահանդեսը, որտեղ լուսանկարների միջոցով ներկայացվում են 25 տարվա ընթացքում Հայաստանի ներկայությունը ՄԱԿ-ում, ինչպես նաեւ Հայաստանում կազմակերպության կողմից տարբեր ոլորտներում իրականոցվող ծրագրեր:

## ՀԱՎԱԿՆՈՏ ԵՎ ԸՆԴԳՐԿՈՒՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

*Հայաստանի եւ Եվրոպական Միության միջեւ շրջանակային նոր համաձայնագիրը հավակնոտ է եւ ընդգրկուն, որը կարեւոր քայլ կհանդիսանա՝ Եվրոպական Միության հետ հարաբերությունները զարգացնելու եւ գործընկերությունն ընդլայնելու համար: Ազգային ժողովում՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեի նախագծի քննարկմանը այս մասին ասաց Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Կարեն Նազարյանը:*

Նա հավելեց, որ համաձայնագիրը համատեղ նախաձեռնություն է, որը հետագայում կխորացնի հարաբերությունները վերանայված Եվրոպայի հարեւանության քաղաքականության եւ Արեւելյան գործընկերության առավել լայն շրջանակներում: «Համաձայնագրով կստեղծվի էներգետիկայի, տրանսպորտի եւ շրջակա միջավայրի ոլորտներում առավել ամուր գործընկերություն, ինչպես նաեւ՝ ակտիվ շարժունակություն՝ հօգուտ մեր քաղաքացիների»,- շեշտեց Հայաստանի ԱԳ փոխնախարարը:

Նազարյանի խոսքով՝ համաձայնագիրը նոր ժամանակաշրջան է նշանավորում Հայաստանի եւ Եվրոպական Միության միջեւ՝ առեւտրային հարաբերություններում: Այն կնպաստի առավել սերտ տնտեսական համագործակցությանը՝ բարելավելով բիզնես միջավայրը: «Այն հնարավորություններ կստեղծի նաեւ բիզնեսի, ներդրումների եւ նոր աշխատատեղերի ստեղծման համար: Համաձայնագրի համապարփակ, հավասարակշռված եւ ուժեղացված առեւտրի դրույթները կօգնեն Հայաստանին հաջողությամբ ինտեգրվել եվրոպական տնտեսությանը: Համաձայնագիրը կուղղորդի Հայաստան-Եվրամիություն քաղաքական եւ տնտեսական հարաբերությունները որակական ավելի բարձր մակարդակի»,- եզրափակեց Կարեն Նազարյանը:



## ՍՏԵՂԾՎԵԼ Է «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԹԵՄԱՅՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

*«Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսի պահպանման եւ հանրահռչակման նպատակով՝ էպոսի թեմայով հայկական առաջին էլեկտրոնային հավելվածն է ստեղծվել:*

Հավելվածը կարելի է ներբեռնել՝ օգտվելով Android մոբայլ օպերացիոն համակարգի Play market բաժնից՝ գրելով «Սասունցի Դավիթ»՝ հայերեն կամ անգլերեն:

Հավելվածի հիմնական բաժիններն են՝ ասմունք, ինտելեկտուալ խաղեր (հարցեր էպոսի մասին եւ հարցեր էպոսից), փազլ եւ վիքիպեդիայի «Սասունցի Դավիթ» կինոնկարի, «Սասնա ծռեր» մուլտֆիլմի եւ Ժան Էլոյանի ասմունքի հղումները: էպոսից հարցերին ճիշտ պատասխանելու նպատակով՝ հավելվածում առկա է նաեւ էլեկտրոնային գիրք, որտեղ ներկայացվում են էպոսի՝ պատասխաններին առնչվող հատվածներ:

Իսկ iOS օպերացիոն համակարգում հավելվածը հասանելի կլինի մի քանի ամիս անց:

Հավելվածի ստեղծումը կարեւորվում է՝ որպես ազգային, ավանդական, հոգեւոր եւ մշակութային արժեքների վերաբերյալ մատաղ սերնդի տեղեկացվածության եւ հայրենասիրական ոգու բարձրացման կարեւորագույն միջոց:

Այն իրականացվել է ՀՀ Մշակույթի նախարարության աջակցությամբ եւ «Սասնա տուն» հասարակության զարգացման աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ՝ «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» ավանդական հանրապետական փառատոնի ծրագրի շրջանակում:

## ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ



***Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը «Հայաստան» համահայկական հիմնադրամի այս տարվա դրամահավաքին նվիրաբերում է ավելի քան 10 միլիոն դրամ: Վարչապետը նոյեմբերի 1-ին այցելել էր հիմնադրամ՝ ծանոթանալու 25-ամյա գործունեությանը, իրականացրած ծրագրերին: «Հարգարժան վարչապետը հիմնադրամում էր մեր հրավերով, ինչի համար շատ շնորհակալ ենք: Նախ՝ ներկայացրեցի բոլոր այն ծրագրերը, որոնք իրականացնում ենք, եւ նախատեսվող ծրագրերը: Մեզ համար անակնկալ եղավ, երբ ֆինանսական բաժնում, ուր սովորաբար արվում է նվիրատվություն, վարչապետը հայտարարեց, որ այս դրամահավաքին նա մեզ նվիրաբերում է իր մեկ տարվա աշխատավարձը, որը 10 միլիոն դրամից մի քիչ ավելի»,- ասաց հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը: «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոնն այս տարի կկայանա նոյեմբերի 23-ին: Այս տարվա հանգանակություններն ուղղվելու են Արցախի ոռոգման համակարգի կառուցմանը:***

## ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՃՈՒՄ Է

***Հայաստան ընդհանուր այցելությունների ցուցանիշը, 2017 թվականի 9 ամիսների ընթացքում, աճել է 21,4 տոկոսով: «Զվարթնոց» օդանավակայանում ուղեւորափոխադրումն արձանագրել է 20,3 տոկոս աճ, «Շիրակ» օդանավակայանում՝ 832.6 տոկոս: «Զվարթնոց» օդանավակայանում բեռնափոխադրումների բնագավառում արձանագրվել է 49,7 տոկոս աճ, իսկ Հայաստանի օդանավակայանների թռիչք-վայրէջքներում՝ 21 տոկոս աճ:***

## ՊԱՏԱՆԴ Է ՎԵՐՑՐԵԼ ԵՐԵԽԱՅԻ

***Հայաստանի քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ մանկահասակ երեխային մանկապարտեզում պատանդ վերցնելու դեպքի առթիվ: «2017 թվականի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, ենթադրյալ հանցագործություն կատարած անձը մուտք է գործել՝ Արմավիր քաղաքի Բաղրամյան փողոցում գտնվող «Մանուշակ» մանկապարտեզ եւ՝ պատանդ վերցրել մանկապարտեզի սան, 29.01.2015թ. ծնված տղա երեխային: Տղամարդն իր մոտ գտնվող դանակի սպառնալիքով՝ պատանդ է պահել երեխային՝ վերջինիս ազատելու համար պահանջելով՝ հանդիպում կազմակերպել իր նախկին կնոջ հետ: Վերջինս աշխատում է նույն մանկապարտեզում: Իրավապահ մարմինների ձեռնարկած միջոցառումների արդյունքում՝ հաջողվել է վնասազերծել ենթադրյալ հանցագործություն կատարած անձին եւ երեխային անվնաս ազատ արձակել: Փոքրիկը վնասվածքներ չունի:***

## ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(3 Նոյեմբերի)

***Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է փարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.***

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 482,70 | 485,80 |
| ԵՎՐՈ | 561,00 | 568,00 |
| ՌՈՒԲԼԻ | 8,25 | 8,40 |

***Հոկտեմբերի 27-ի համեմատ, ԱՄՆ դոլարի կուրսը ավելացել է 1,0 դրամով:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՆՈՅԵՄԲԵՐ



*4.11.2017. Տոն բոլոր սրբերի՝ հների եւ նորերի, հայտնիների եւ անհայտների*

*6.11.2017. Սուրբ Ստեփանոս Հռոմի Հայրապետի, քահանաների, սարկավագների եւ մարդկանց հիշատակության օր*

*6.11.2017. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման 18-րդ տարեդարձը*

*7.11.2017. Սուրբ Ակիփսիմոս եպիսկոպոսի, Հովսեփ քահանայի, Այիթալա սարկավագի եւ Պղատոն վկայի հիշատակության օր*

*11.11.2017. Հրեշտակապետեր Գաբրիելի եւ Միքայելի եւ ողջ երկնային զորքի հիշատակության օր*

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈ

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻՆ

Վերջերս, Երեւանու, տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված ուշ միջնադարի հայ բանաստեղծ-աշուղ Սայաթ-Նովայի (1722-1795) ծննդյան 305-ամյակին: Մեծ բանաստեղծի կյանքն ու գործունեությունը, ստեղծագործական արվեստն ու գրական ժառանգությունը հանգամանալից խոսքով ներկայացրեց Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր-նախագահ, գրող, հրապարակախոս Ստեփան Պապիկյանը:

Պատշաճ արժեւորելով հայ գրական մշակույթում Սայաթ-Նովայի արվեստի մեծ դերակատարումը, գուսանական քնարերգության մեջ բերած նորույթները՝ նա անդրադարձավ նաեւ բանաստեղծի վրացերեն (36 տաղ), ադրբեջաներեն(125 տաղ) եւ այլ լեզուներով ստեղծած խաղերին, այդ ժողովուրդների շրջանում ձեռք բերած ժողովրդականությանը եւ ընդգծեց՝ Սայաթ-Նովա արվեստագետի ստեղծագործության համամարդկային արժեքը:

Երեկոյին հնչեցին Աշուղ-բանաստեղծի անմահ ստեղծագործությունները:

ՏԱՐԵԴԱՐՁ

## ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ ՏՈՆԵՑԻՆ «ՋԱՎԱԽՔ» ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՄՈՒՅԹԻ 17-ԱՄՅԱԿԸ

*Հոկտեմբերի 29-ին, Ախալքալաքիի Մշակույթի տանը հանդիսավորապես նշվեց «Ջավախք» երգի-պարի ազգագրական համույթի 17-ամյա տարեդարձը:*




Արարողությանը ներկա էին Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների վարչության, սակրեբուլոների ղեկավարները:

Համույթը հանդես եկավ տարբեր պարային եւ երգային համարներով:

Համույթի հիմնադիրն ու ղեկավարն են Աշուղ Ալիկ Քսպոյանը եւ Լամարա Քսպոյանը: Համույթում հիմնականում պարում են հայկական ազգային պարեր:

***«Վրաստան» թերթը շնորհավորում է «Ջավախք» համույթին՝ 17-ամյա տարեդարձի առթիվ, մաղթում՝ ստեղծագործական նորանոր ու մեծ հաջողություններ:***

ՄԱՐԶԱԿԱՆ

## ԿՐԿԻՆ՝ ՆԱՀԱՆՋ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Ֆուտբոլի համաշխարհային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը:

Ցավոք, այս անգամ էլ թե' Վրաստանի եւ թե' Հայաստանի հավաքականները ետընթաց են ունեցել: Նոր աղյուսակում Վրաստանի թիմը, նախորդի համեմատությամբ, իր դիրքերը զիջելով 4 հորիզոնականով, զբաղեցրել է 107-րդ տեղը: Հայաստանի հավաքականը նահանջել է 7 դիրքով եւ՝ հանգրվանել 90-րդ հորիզոնականում:

Դասակարգման աղյուսակի առաջին 6 տեղերում փոփոխություն տեղի չի ունեցել. Առաջին տեղում Գերմանիան է, նրան հաջորդում են Բրազիլիան, Պորտուգալիան, Արգենտինան, Բելգիան, Լեհաստանը: Լավագույն տասնյակում ընդգրկված են նաեւ Ֆրանսիան, Իսպանիան, Չիլին եւ Պերուն:

## ՇԱԽՄԱՏԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Կրետեում անցկացվող Եվրոպայի շախմատի թիմային առաջնությունում Վրաստանի տղամարդկանց հավաքականը, 5-րդ տուրից հետո, 5 միավորով զբաղեցնում է 18-23-րդ տեղը, իսկ Հայաստանի թիմը 8 միավորով կիսում է 2-5-րդ տեղերը: Շախմատի Հայաստանի տղամարդկանց հավաքականը, Եվրոպայի թիմային առաջնության 5-րդ տուրից հետո, Հունգարիայի, Ռուսաստանի եւ Լեհաստանի թիմերի հետ կիսում է 2-5-րդ տեղերը: Մրցաշարային աղյուսակը 9 միավորով գլխավորում է Խորվաթիայի հավաքականը:

Ինչ վերաբերում է կանանց մրցաշարին, ապա, 5-րդ տուրում Վրաստանի թիմը 4:0 հաշվով պարտության մատնեց Հայաստանի հավաքականին: Վրաստանի կանանց թիմը 8 միավորով, 5-րդ տուրից հետո, Ուկրաինայի, Լեհաստանի ու Թուրքիայի հետ կիսում է 2-5-րդ տեղերը, իսկ Հայաստանի թիմը, 6 միավորով, 13-րդն է:

Նոյեմբերի 3-ին Վրաստանի տղամարդկանց թիմի մրցակիցն էր Իտալիայի թիմը, իսկ հայ շախմատիստներն իրենց ուժերը չափեցին Ադրբեջանի հավաքականի հետ:

Նույն օրը Վրաստանի կանանց թիմը իր ուժերը չափեց Ուկրաինայի հավաքականի հետ, իսկ հայ շախմատիստուհիների մրցակիցը Հունգարիայի թիմն էր:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

## ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ-ՆԿԱՐԻՉ ԼԵՎՈՆ ՕՍԻՊՈՎԸ՝ «ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ» ՄԵԴԱԼԻ ԱՍՊԵՏ

*Վիրահայության մշակույթիականավոր գործիչ, Վրաստանի վաստակավոր քանդակագործ-նկարիչ Լեւոն Օսիպովը, Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով, պարգեւատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:*



Վաստակաշատ նկարչին բարձր պարգեւը հանձնել է հանրապետության նախագահը: Իր ելույթում Սերժ Սարգսյանը նշել է, որ այն տրվում է՝ իր պատմական հայրենիքի արվեստի մեջ ներդրած մեծագույն ավանդի եւ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

Երախտիքի խորին զգացումով՝ Լեւոն Օսիպովը Երեւանում այցելել է հռչակավոր մեծ քանդակագործ, իր ուսուցը, եղել է Հայաստանի Գեղարվեստից Ակադեմիայում, ուր ստացել էր մասնագիտական կրթություն: Ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը հյուրին նվիրել է «Գեղարվեստից Ակադեմիայի պատմությունը» աշխատությունը

***Թանկագին Լեւոն, «Վրաստան» թերթի խմբագրակազմը ի սրտե շնորհավորում է Ձեզ՝ բարձր պարգեւի առթիվ:***



## Խ Ա Չ Բ Ա Ռ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Անկուշտ, ագահ: 8.Իր: 9.Հյուսիսային բեւեռի շրջակայքը: 10.Բանկային գործողություն: 13.Ծուռումուռ գրերի ամբողջությունը: 17.Ոտքի նեղ ճանապարհ, արահետ: 18.Կրակից ստացած վերք: 21.Իղձ, տենչանք: 24.Ֆրանսիացի կենսաբան Պիեռ ...: 25.ճապոնական ռազմական արվեստ: 27.Ջվալ: 29.Թաց, խոնավ: 31.Թանկագին քար: 34.Ձիու թեթեւ ու համաչափ ընթացք: 35.ԱՄՆ խորհրդարան: 36.Շնչելու օրգան: 37.Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ազգ: 38.Կինոդերասանուհի Ումա ...: 39.Կապկի տեսակ: 42.Ընտիր: 43.Վրացական պրոֆեսիոնալ վոկալային արվեստի հիմնադիրներից ... Սարաջիշվիլի: 44.Նոննա Գափրինդաշվիլի, մարզաձեւ: 45.Էգ ձի: 48.Խմում են հիվանդության ժամանակ: 49.Վրացական ազգային պանրի տեսակ: 50.Վաղեմի, անցած: 51.... եւ Պոժարսկի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Անգլիայի, Շոտլանդիայի եւ Իռլանդիայի թագավոր 1625 թ.-ից՝ ... I Ստյուարտ: 3.Պարսկահայոց ամսագիր: 4.Օդապարան: 5.Շրթունք: 6.Միտքը չկենտրոնացած: 7.Միջնադարյան ֆեոդալական տիտղոս Արեւմտյան Եվրոպայում: 11.Ինքնիշխան պետություն՝ Հարավարեւմտյան Ասիայում, Արաբական թերակղզու վրա: 12.«Լեռ» ուղտի մեջքին: 14.Խրթին, դժվար: 15.Վտանգի կոչ: 16.Արմատ (ժող.): 19.Գրական ժանր: 20.Ծորելը, ծորում: 21.Գետինը մաքրելու շոր: 22.Կողպեք: 23.Խորհրդային ռուսական թատրոնի եւ կինոյի դերասան Զինովի ...: 26.Թաղամաս Երեւանում: 28.Բանտ: 30.Հայ փիլիսոփա եւ գիտնական: 32.Հանցանքի դեպքում թողություն խնդրելու բացականչություն: 33.Քարթլիի (Իբարիա) թագուհի: 37.Ծալկայի շրջանի Այազմա գյուղում ծնված հայ գուսան: 39.Մոմապատում: 40.Թումանյան, «Շունն ու ...»: 41.Դարձյալ, նորից: 46.Պոչ: 47.Հայաստանի միջնադարյան մայրաքաղաքներից:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Բաժբեուկ: 5.Ավանակ: 8.Այղր: 9.Խոնարհ: 10.Ջվալ: 11.Վերգո: 13.Նրա: 14.Ալեն: 15.Միսսուրի: 18.Այս: 20.Ծախս: 21.Օթար: 23.Սատար: 24.Դիանա: 27.Լիրա: 29.Ասթմա: 31.Ուն: 34.Իկարուս: 35.Նա: 36.Առնո: 37.Տորթ: 39.Սին: 40.Սար: 42.Թո: 43.Թալին: 46.Սամարա: 48.Այր: 49.Ռիգա: 52.Մեգ: 54.Կագոր: 55.Քոչար: 56.Պի: 57.Իգնատ: 58.Մինաս:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բախ: 2.Ժաննա: 3.Եզրագիծ: 4.Կա: 5.Արագվի: 6.Նովել: 7.Կալենց: 12.Ելուստ: 13.Նվարդ: 14.Աղթամար: 16.Սաս: 17.Սխալ: 19.Ստալին: 22.Ռաբունի: 25.Նիկո: 26.Արա: 28.Արուս: 29.Աստրա: 30.Թարթառ: 32.Նանի: 33.Զարթոնք: 38.Թորիկ: 41.Սարմեն: 44.Լինչի: 45.Նաիրի: 47.Ագապի: 50.Ագին: 51.Քրիս: 53.Գետ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445